Հայկուշ Գրիգորի Միրզոյանի պարտավորության դիմաց 3-րդ անձին պատկանող անշարժ գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին

2026-10-27 14:13:49

Հայտատու	Ֆիզիկական անձինք
Տեսակ	Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ
Հիմք	Սնանկության մասին ՀՀ օրենքի 76-րդ հոդված

2026 թվականի հոկտեմբերի 23-ին, ժամը 12:00-ին ՀՀ Սնանկության դատարանի վճռով թիվ ՍնԴ0227/04/26 սնանկ ճանաչված Հայկուշ Գրիգորի Միրզոյանի սնանկության գործով կառավարիչ Խ.Նազարյանի կողմից հայտարարված ք.Երևան, Ազատության 14-54 հասցեում /կառավարիչի գրացենյակ/ ՀՀ Սնանկության դատարանի վճռով թիվ ՍնԴ0227/04/26 սնանկ ճանաչված Հայկուշ Գրիգորի Միրզոյանի պարտավորության դիմաց 3-րդ անձ գրավատու Նարեկ Սենիկի Հովսեփյանին/պարտապանի ամուսնուն/ պատկանող և «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ԲԲԸ-ի գրավի առարկա հանդիսացող անշարժ գույքի առաջին աճուրդը չի կայացել հայտեր չլինելու պատճառով:
2026 թվականի նոյեմբերի 24-ին, ժամը 12:00-ին ՀՀ Սնանկության դատարանի վճռով թիվ ՍնԴ0227/04/26 սնանկ ճանաչված Հայկուշ Գրիգորի Միրզոյանի սնանկության գործով կառավարիչ Խ.Նազարյանի կողմից կանցկացվի ք.Երևան, Ազատության 14-54 հասցեում /կառավարիչի գրացենյակ/ ՀՀ Սնանկության դատարանի վճռով թիվ ՍնԴ0227/04/26 սնանկ ճանաչված Հայկուշ Գրիգորի Միրզոյանի պարտավորության դիմաց 3-րդ անձ գրավատու Նարեկ Սենիկի Հովսեփյանին/պարտապանի ամուսնուն/ պատկանող և «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ԲԲԸ-ի գրավի առարկա հանդիսացող անշարժ գույքի կրկնաճուրդը ՝ համաձայն ՀՀ Սնանկության դատարանի կողմից տրված 25.09.2026թ. որոշման՝ գույքը հրապարակային սակարկությունների միջոցով վաճառելու թույլատրելու մասին:
Աճուրդի է ներկայացվում Հայկուշ Գրիգորի Միրզոյանի պարտավորության դիմաց 3-րդ անձ գրավատու Նարեկ Սենիկի Հովսեփյանին պատկանող և «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ԲԲԸ-ի գրավի առարկա հանդիսացող անշարժ գույքը համաձայն «Էքսպերտ Օցենկա» ՍՊԸ-ի կողմից տրված գնահատման հաշվետվությանը հետևյալ գույքը 10 տոկոս նվազեցված արժեքով՝
ԼՈՏ 1 - ՀՀ,Վայոց Ձորի մարզ, ք. Ջերմուկ Մաշտոցի փող 26 հասցեում գտնվող անշարժ գույք / վկայական 16022021-10-0007, կադ. ծածկագիր 10-002-0029-0033-001, ճաշարան, մակերեսը ՝ 123.63 ք մ/ որի գնահատված շուկայական արժեքն

կազմում է ՝ 28.080.000 (քսանութ միլիոն ութսուն հազար) ՀՀ դրամ:
Աճուրդը անցկացվում է ՀՀ Արդարադատության Նախարարի 16.03.2020թ-ի թիվ 116-Ն հրամանով հաստատված «Պարտապանին պատկանող գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին» կարգով: Ըստ կանոնակարգի՝ աճուրդում հաղթած մասնակիցը պարտավոր է աճուրդն անցկացնելու օրվանից՝ աճուրդի արդյունքների վերաբերյալ համատասխան արձանագրության հիման վրա, 10 օրվա ընթացքում պարտապանի սնանկության հատուկ հաշվին վճարել լոտի գնման գինը ՝ հաշվանցելով նախավճարը: Նշված ժամկետում վաճառքի գինն ամբողջությամբ չվճարելու դեպքում աճուրդը համարվում է չկայացած , իսկ աճուրդի հաղթողի կողմից վճարված նախավճարը և մասնակցության վճարը չեն վերադարձվում:Գույքահարկի վճարումը կատարվում է գնորդի կողմից որը ներառված չէ աճուրդային արժեքի մեջ : Գույքի առուվաճառքի պայմանագրի, դրանից ծագող իրավունքների գրանցման, վտարման, գույքը գնորդին փոխանցելու, պայմանագրից բխող բոլոր անհրաժեշտ այլ (ցանկացած տեսակի) ծախսերը և գործողությունները կատարվում են աճուրդի հաղթող ճանաչված մասնակցի կողմից ՝ իր միջոցներով:
Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝
- Ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճեն
- իրավաբանական անձանց դեպքում նրանց պետ.գրանցումը հաստատող փաստաթղթերի պատճենները:
- աճուրդի մասնակցության և նախավճարի վճարումները հավաստող փաստաթղթերը, որոնք պետք է կազմեն համապատասխանաբար լոտի մեկնարկային գնի 1 % տոկոսը, բայց ոչ ավել 200.000 ՀՀ դրամը և 5% տոկոսը, պետք է վճարվեն «Այ ԴԻ Բանկ» ՓԲԸ-ի գործող թիվ 11807069443500 սնանկության հատուկ հաշվին, և ներկայացվեն ՀՀ Սնանկության դատարան /ք.Երևան, Օտյան 53/2/ մինչև աճուրդի նախորդող 5 օրը, մասնակցի վկայական ստանալու համար:
Աճուրդում հաղթող մասնակից է համարվում աճուրդում առավել բարձր գին առաջարկող մասնակիցը:
- Աճուրդին կարող են ներկա գտնվել նաև աճուրդի մասնակից չհամարվող անձինք, ովքեր աճուրդին ներկա գտնվելու համար վճարում են մուտքի վճար 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամի չափով: Աճուրդի մասնակից չհամարվող անձինք աճուրդին ներկա գտնվելու նպատակով հայտ ներկայացնելու համար սահմանված ժամկետում սնանկության կառավարչին ուղարկում են ծանուցում աճուրդին ներկա գտնվելու մտադրության մասին՝ նշելով ներկա գտնվելու ցանկություն ունեցող անձի անունը, ազգանունը, ծանուցման հասցեն, կոնտակտային տվյալները: Ծանուցմանը կցվում են անձը հաստատող փաստաթղթի պատճենը, ինչպես նաև մուտքի վճարի վճարումը սույն հայտարարությունում նշված սնանկության հատուկ հաշվին կատարված լինելու փաստը հաստատող անդորրագիրը:

Աճուրդն անցկացվում է սույն հայտարարությունում նշված մեկնարկային գնի ավելացմամբ: Հաղթող է ճանաչվում ամենաբարձր գին առաջարկած մասնակիցը: Լոտերի ուսումնասիրությունների և այլ մանրամասներին ծանոթանալու համար բոլոր իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքային օրերին կարող են այցելել ք.Երևան Ազատության 14-54 հասցե, ժամը 11-00–ից մինչև 18-00 կամ նախապես ուղարկելով կառավարիչին էլեկտրոնային փոստով nazaryanx@mail.ru նամակ:

37494221985

nazaryanx@mail.ru

ք. Երևան,Ազատության 14-54